Հավելված N 539
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ռազմավարական ոլորտների վարչության (այսուհետ՝ Վարչություն) ծանր արդյունաբերության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ՝ (ծածկագիրը՝ 23-32.25-Մ2-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա է և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, քաղաք Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է ծանր արդյունաբերության ոլորտում տիրող վիճակի մոնիթորինգի իրականացման աշխատանքները.
2. իրականացնում է ծանր արդյունաբերության քաղաքականության մշակման աշխատանքները.
3. իրականացնում է ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական բացթողումների, ինչպես նաև գործող ձեռնարկություններում առկա խնդիրների վերհանումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների մշակման աշխատանքները.
4. իրականացնում է ծանր արդյունաբերության մեջ ազգային կարևորագույն ներդրումային և նորարարական նախագծերի ձևավորման, իրականացման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկների մշակման աշխատանքները.
5. իրականացնում է ծանր արդյունաբերության ոլորտի զարգացման խոչընդոտների վերհանման և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների մշակման աշխատանքները.

6. իրականացնում է ծանր արդյունաբերական ոլորտում գործունեություն ծավալող ձեռնարկությունների առկա տեխնոլոգիական մակարդակի գնահատման համար առաջարկությունների մշակման աշխատանքները.

7. իրականացնում է քիմիական արդյունաբերության զարգացման պետական քաղաքականության ձևավորման ու իրագործման առաջարկների մշակման աշխատանքները.

8. իրականացնում է քիմիական արդյունաբերության քաղաքականության մշակման աշխատանքները.

9. իրականացնում է քիմիական արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված պետական ծրագրերի նախագծերի մշակման աշխատանքները.

10. մասնակցում է քիմիական արդյունաբերության ոլորտներում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման աջակցության հիմնական մեխանիզմների, ուղղությունների և գործողությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքներին.

11. իրականացնում է քիմիական արդյունաբերության ոլորտներում տիրող վիճակի մոնիթորինգ.

12. իրականացնում է ոլորտներում իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական բացթողումների, ինչպես նաև գործող ձեռնարկություններում առկա խնդիրների վերհանման և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների մշակման աշխատանքները.

13. իրականացնում է քիմիական արդյունաբերության ոլորտներում ազգային կարևորագույն ներդրումային և նորարարական նախագծերի ձևավորման, իրականացման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկների մշակման աշխատանքները.

14. իրականացնում է նախկինում քիմիական արտադրություն իրականացնող և ներկայումս չգործող կամ մասնակի գործող ընկերությունների վիճակի ուսումնասիրման ու գնատատման, ինչպես նաև դրանց վերագործարկման ուղղությամբ առաջարկությունների մշակման աշխատանքները.

15. մասնակցում է ԵԱՏՄ շրջանակներում ոլորտային համագործակցության զարգացման ու խորացման աշխատանքներին.

16. մասնակցում է տեխնիկական կանոնակարգմանն առնչվող իրավական դաշտի մշակման իրականացման աշխատանքներին, այդ թվում՝ ԵԱՏՄ շրջանակներում ԵԱՏՄ սակագնային և ոչ սակագնային կարգավորման աշխատանքներին:

Իրավունքները՝

- ստանալ համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի հետ ծանր և քիմիական արդյունաբերության քաղաքականության մշակման և միջնաժամկետ վերանայման վերաբերյալ կարծիքներ և առաջարկություններ.

• ստանալ համապատասխան մարմիններից ծանր արդյունաբերության ոլորտի ռազմավարական փաստաթղթերի ու իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ.

• ստանալ ծանր արդյունաբերության ոլորտի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպություններից ստացած անհրաժեշտ տեղեկատվությունը.

• կազմակերպել Նախարարության տարբեր ստորաբաժանումների և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների հետ ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտներում ներդրողների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների լուծման համար աշխատանքային քննարկումներ.

• ստանալ զարգացած և զարգացող երկրների ծանր և քիմիական արդյունաբերության քաղաքականության և ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցների ու մոտեցումների վերաբերյալ շահագրգիռներ մարմիններից ստացած անհրաժեշտ տեղեկատվությունը.

• կազմակերպել հանդիպումներ համապատասխան միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ.

• օգտվել համապատասխան շահագրգիռ մարմիններից ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտների քաղաքականությունների, ներդրումների ներգրավման, ներդրումների պաշտպանության համար կիրառվող միջոցների ու մոտեցումների վերաբերյալ ստացված պարզաբանումներից և բացատրություններից.

• ստանալ շահագրգիռ մարմիններից ամբողջական տեղեկատվական փաթեթ ծանր և քիմիական արդյունաբերության ոլրտներում ներդրումային միջոցառումներին և համաժողովներին մասնակցելու համար.

• ստանալ ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտների քաղաքականությունների, ներդրումների ներգրավման, ներդրումների պաշտպանության համար կիրառվող միջոցների ու մոտեցումների վերաբերյալ դիվանագիտական կապուղիներով արտասահմանյան երկրներից ստացված տեղեկատվությունը:

Պարտականությունները՝

• մշակել ծանր և քիմիական արդյունաբերության մեջ ազգային կարևորագույն ներդրումային և նորարարական նախագծերի ձևավորման իրականացման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկներ.

• մշակել ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտներիի քաղաքականությունը, կատարել անհրաժեշտ վերլուծություններ և ներկայացնել առաջարկություններ.

• մշակել ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտներին առնչվող իրավական ակտերի ինչպես նաև նախագծերի վերաբերյալ առաջարկներ.

• մշակել ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտների ներդրողների կողմից

բարձրացված հարցերի և խնդիրների դասակարգման, վերլուծության և խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններ.

- վերլուծել զարգացած և զարգացող երկրների ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտների ներդրումային քաղաքականության, ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցները և մոտեցումները և ներկայացնել առաջարկներ.
- տրամադրել Նախարարության համապատասխան ստորաբաժանումներին և այլ շահագրգիռ մարմիններին ծանր արդյունաբերության ոլորտի օտարերկրյա ներդրումների վերաբերյալ հաշվարկ-տեղեկանքներ.
- նախապատրաստել համապատասխան մարմինների կամ անհատների կողմից ներկայացված հարցադրումների վերաբերյալ առաջարկություններ.
- մշակել իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, ինչպես նաև մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ.
- նախապատրաստել առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախագծեր:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Փաստաթղթերի նախապատրաստում

3. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4.Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: